ՄԱՍ III

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ 2010 թվականի համախմբված բյուջեն կանխատեսվում է՝ եկամուտների գծով՝ 701.7 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 884.7 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 183.0 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների 2010 թվականի բյուջեների ծավալը գնահատվել է՝ եկամուտների գծով՝ 82.3 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները) և ծախսերի գծով՝ 82.3 մլրդ դրամ: Համայնքների բյուջեների ծավալը ծախսերի գծով գերազանցում է 2009 թվականի սպասողականը (խիստ նախնական) շուրջ 30.3 մլրդ դրամով, իսկ 2008 թվականի փաստացի ձևավորված մակարդակը շուրջ 30.6 մլրդ դրամով: Նշված գերազանցումը հիմնականում պայմանավորված է մի կողմից համայնքներին 2010 թվականի պետության կողմից հատկացվող ֆինանսական օժանդակության ծավալի զգալի աճով, իսկ մյուս կողմից «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխան Երևանի քաղաքապետին վերապահված պարտադիր լիազորությունների և պետության պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման համար նախագծով մեծածավալ (շուրջ 24 մլրդ դրամ) հատկացումների նախատեսմամբ: Մասնավորապես, ըստ այդ օրենքի պահանջի, Երևանի քաղաքապետարանի գծով «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացիկ (Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված իմաստով) ծախսերի ֆինանսավորման այն ուղղությունները, որոնք օրենքով վերաբերում են Երևանի համայնքի քաղաքապետին վերապահված պարտադիր և պատվիրակված լիազորություններին, նախատեսվում են նաև 2010-2013 թվականների ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծում: Անշուշտ, համայնքների բյուջեների աճին կնպաստի նաև

համայնքներում բյուջեների կատարման գործընթացի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները:

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 676.7 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 859.7 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 183.0 մլրդ դրամ:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի գումարը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով հաստատված[1] և ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 140.8 մլրդ դրամ և 144.8 մլրդ դրամ ավելացումով, իսկ 2009 թվականի սպասողական ցուցանիշի համեմատությամբ՝ 21.3 մլրդ դրամով պակաս: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2010 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի տոկոսային հարաբերությունը կանխատեսվում է 5.69 %-ի չափով, 2009 թվականի համար ծրագրված, սպասողական և 2008 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 1.0%-ի, 6.6%-ի և 1.0%-ի դիմաց: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրվում է ներգրավել շուրջ 355.45 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 19 աղյուսակում):

---

[1], 2008-2010թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով.

1. 2008 թվականի փաստացի ծախսերը, 2009 թվականի տարեկան ցուցանիշները նվազեցված են՝

ա) ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ-ին տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհի շրջանակներում նախատեսված ծախսերի՝ համապատասխանաբար 5.8 մլրդ դրամի և 21.5 մլրդ դրամի չափով, քանի որ 2010 թվականին այս ծրագրի գծով ծախսեր չեն նախատեսվել:

բ) ԱԱՀ-ի վերադարձի՝ պետական բյուջեից ֆինանսավորվող գումարների չափով, քանի որ ի տարբերություն 2008-2009թթ, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի կազմում նման գումար չի ծրագրվել:

Բացի այդ, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի կազմում ներառված չեն 2008 թվականին փաստացի կատարված 21.8 մլրդ դրամի չափով ծախսերը, այդ թվում՝

- «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ մասերի համաձայն ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից կատարված՝ 5.1 մլրդ դրամ ծախսերը :
- ՀՀ պետական կառավարման մարմինների 2008 թվականի արտաբյուջետային միջոցներից կատարված շուրջ 13.6 մլրդ դրամ ծախսերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում):
- շուրջ 3.1 մլրդ դրամ ծախսերը, որոնք 2009-2010 թվականների պետական բյուջեով արտացոլված են դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում: